ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2016թ. օգոստոսի 11 - ին, N 99 -Ա

ք. Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի N 3-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով, <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2016 թվականի օգոստոսի 9-ի N 650–Ա, 651-Ա որոշումները՝ ***որոշում եմ.***

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի հաստիքացուցակի մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1)<<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի առաջին կարգի մասնագետ (ծածկագիր՝ 61-4.1-30)>> բառերը փոխարինել <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 61-2.3-51)>> բառերով:

Գ.ԳՅՈՌԱԼՅԱՆ